ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՔՈԼԵՋԻ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 9-ի N 1791-Ն որոշմամբ ՀՀ ոստիկանության ակադեմիա պետական հիմնարկը վերակազմավորվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիր պետական ոչ առևտրային կազմակերպության և հաստատվել է վերջինիս կանոնադրությունը (վերնագիրը փոփ. 28.04.2011թ. N 615 – Ն որոշմամբ):

Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումներից է միջին մասնագիտական կրթական ծրագրի իրականացումն ապահովող քոլեջը: Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումներից է ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետն իրականացնում է՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ «Ոստիկանության սպա» որակավորմամաբ ուսուցում: Միջին մասնագիտական կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ավարտած, պետական ատեստավորում անցած շրջանավարտներին շնորհվում է «Ոստիկանության սպա» որակավորում:

Միջին մասնագիտական կրթական ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով, երկու տարի ժամկետով: «Ոստիկանական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտների համար ապահովում է՝ ոստիկանական գործունեության բնագավառի կարողությունները և հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների, ինչպես նաև ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, հրազեն և հարկադրանքի այլ միջոցներ գործադրելու հմտություններ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի միջին մանսագիտական կրթության ուսումնական գործընթացի տևողությունն ու բովանդակությունը սահմանվում է Կրթահամալիրի պետի կողմից հաստատված ուսումնական պլանով:

Միջին մանսագիտական կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով որոշակի մասի ուսուցումը իրականացվում է ուսումնական և նախաավարտական պրակտիկաների ձևով: